**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 15-ը մարտի 2016թ.
ժամը $12^{00}$

**Գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան(ԳԱՊ),

ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պահեստների, տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային սպասարկման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Սարկիսյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, վքն, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ոսկանյան,

ՀՀՊՆ աշխատակազմի վերահսկիչ վարչության ԸՎ բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մուրադյան,

ՀՀ ՊՆ ներքին աուդիտի վարչության կատարողականի աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾ 3-րդ դասի խորհրդական Ս. Աթանեսյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Գ. Տերյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար « հանդերձանքի » ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «ՍՊ» ՍՊԸ |
| 2 | «Վանգաս» ՍՊԸ |
| 3 | «Ավանգարդ » ՍՊԸ |
| 4 | «Պահապան» ՍՊԸ |
| 5 | «Միտք-Կ» ՍՊԸ |
| 6 | «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ |
| 7 | «ԳԴԱԿ» ՍՊԸ |
| 8 | «Անգել» ՍՊԸ |
| 9 | «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**2 .«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10 - ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Գ. Տերյան)

2.1 «ՍՊ» ՍՊԸ, «Վանգաս» ՍՊԸ, «Ավանգարդ» ՍՊԸ, «Պահապան» ՍՊԸ, «Միտք-Կ» ՍՊԸ, «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ, «ԳԴԱԿ» ՍՊԸ, «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

*Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 07.08.2015թ. թիվ 1/73.1/21156-15 գրության՝ գնումների բողոքարկման խորհրդի կողմից 29.07.2015թ. կայացված որոշման հիման վրա «Անգել» ՍՊԸ հայտը հանձնաժողովի կողմից մերժվել է, քանի որ վերը նշված գրությամբ մեկ տարվա ընթացքում «Անգել» ՍՊԸ կողմից հայտ ներկայացնելու դեպքում հայտը ենթակա է մերժման:*

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Վանգաս» ՍՊԸ, «Ավանգարդ» ՍՊԸ, «Պահապան» ՍՊԸ, «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ, «ԳԴԱԿ» ՍՊԸ, «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): «ՍՊ» ՍՊԸ, «Միտք-Կ» ՍՊԸ հայտերով ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ՝ «Միտք-Կ» ՍՊԸ հավելված 3.1 ներկայացված <մասնագիտական փորձառություն> որակավորման չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին, «ՍՊ» ՍՊԸ ներկայացրած հավելված 1-ը և հավելված 4.2-ը իրար չեն համապատասխանում, ուստի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և տեղեկացվել է «ՍՊ» ՍՊԸ, «Միտք-Կ» ՍՊԸ անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում «ՍՊ» ՍՊԸ շտկել է անհամապատասխանությունը, իսկ «Միտք-Կ» ՍՊԸ ոչ, ուստի վերջինիս հայտը մերժվել է:

Ընդունվել է որոշում կողմ 6, դեմ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 7 մասնակից.

| ՀՀ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվ. գինը | Հաղթող կազմակերպության | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Խմելու ջրի տարաներ /տափաշիշ ալյումինե/ | հատ | 10,000 | 1,100 | «ՍՊ» | 825.00 | 990 | «Վանգաս» | 2,025 | 2,430 |
| 2 | Կաթսաներ / կաթսա, կոտելոկ ալյումինե/ | հատ | 10,495 | 1,090 | «ՍՊ» | 816.67 | 980 | «Վանգաս» | 2,025 | 2,430 |
| 3 | Պաշտպանիչ թիկնոցներ կամ պոնչոներ /թիկնոցավրան/ | հատ | 10,000 | 2,000 | «Վանգաս» | 1,200.00 | 1,440 | «ՍՊ» | 1,500 | 1,800 |
| | | | | | | | | «Ավանգարդ» | 1,483.33 | 1,780 |
| 4 | Մորթե հագուստ / կիսավերարկու՝ ոչխարի մորթուց/ | հատ | 520 | 64,000 | «Ավանգարդ» | 31,500. | 37,800 | «ՍՊ» | 48,000 | 57600 |
| | | | | | | | | «Պահապան» | 36,660 | 43992 |
| | | | | | | | | «Վանգաս» | 32,250 | 38700 |
| | | | | | | | | «Միտք-Կ» | 33,000 | 39600 |
| 5 | Ձեռնոցներ / ձեռնոց հինգ մատնյա ֆլիզից/ | զույգ | 46,193 | 1,200 | «Պահապան» | 830 | 996 | «ՍՊ» | 958.33 | 1150 |
| | | | | | | | | «Վանգաս» | 900 | 1,080 |
| | | | | | | | | «Ավանգարդ» | 830 | 996 |
| 6 | Ձեռնոցներ / ձեռնոց երկմատնյա մորթե ներդիրով/ | զույգ | 2,650 | 2,000 | «Ավանգարդ» | 1,316.67 | 1,580 | «Պահապան» | 1,660 | 1,992 |
| | | | | | | | | «ՍՊ» | 1,500 | 1,800 |
| | | | | | | | | «Էլաամոդա» | 1,487.50 | 1,785 |
| 7 | Ծոպաններ / պարաններ վրանների համար/ | հատ | 3,400 | 3,000 | «Ավանգարդ» | 1,733.33 | 2,080 | «Վանգաս» | 2,475 | 2,970 |
| | | | | | | | | «ՍՊ» | 2,250 | 2,700 |
| 8 | Ջրի շշերի կրիչներ /տափաշշի չապիկներ/ | հատ | 10,000 | 150 | «ՍՊ» | 112.50 | 135 | «Պահապան» | 825 | 990 |
| | | | | | | | | «Էլաամոդա» | 122.50 | 147 |
| 9 | Թիկնապայուսակ /ուսապարկ/ | հատ | 11,172 | 14,040 | «Ավանգարդ» | 8,166.67 | 9,800 | «Վանգաս» | 11,600 | 13920 |
| | | | | | | | | «ԳԵՎԳՐՈՒՊ» | 11,583.33 | 13,900 |
| | | | | | | | | «ՍՊ» | 9,875 | 11,850 |
| 10 | Քնապարկեր /քնապարկ/ | հատ | 7,000 | 8,000 | «Էլաամոդա» | 5,620.83 | 6,745 | «ԳԵՎԳՐՈՒՊ» | 9,166.67 | 11,000 |
| | | | | | | | | «Միտք-Կ» | 6,666.67 | 8,000 |
| | | | | | | | | «Վանգաս» | 6,550 | 7,860 |
| | | | | | | | | «Պահապան» | 6,500 | 7,800 |
| | | | | | | | | «ՍՊ» | 6,250 | 7,500 |
| | | | | | | | | «Ավանգարդ» | 5,225 | 6,270 |
| 11 | Ձեռքի պայուսակներ /պայուսակ դաշտային սերժանտական/ | հատ | 2,058 | 3,100 | «Ավանգարդ» | 1,900.00 | 2,280 | «ՍՊ» | 4,783.33 | 5,740 |
| 12 | Ակնոցներ /ակնոց դահուկորդի/ | հատ | 2,000 | 1,300 | «ՍՊ» | 975.00 | 1,170 | «Ավանգարդ» | 900 | 1,080 |
| 13 | Գոտիներ /գոտի տոնական սպայական/ | հատ | 8,000 | 9,600 | «ԳԵՎԳՐՈՒՊ» | 4,833.33 | 5,800 | «Գդակ» | 7,750 | 9,300 |
| | | | | | | | | «ՍՊ» | 7,200 | 8,640 |

«ՍՊ» ՍՊԸ՝ 1-13, «Վանգաս» ՍՊԸ՝ 1,2,3,4,7, «Ավանգարդ» ՍՊԸ՝ 3,4,6,11, «Պահապան» ՍՊԸ՝ 4,5,6,8,10 , «Միտք-Կ» ՍՊԸ՝ 4,10, «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ՝ 6,8,10, «ԳԴԱԿ» ՍՊԸ՝ 13, «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ՝ 10,13 չափաբաժիններով առաջարկել են ԵՏՄ արտադրության ապրանքներ: 5-րդ, 10-րդ և 12-րդ չափաբաժիններով կիրառվել է ԵՏՄ ապրանքներին 15% առավելություն տալու դրույթը:

3.2 Մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություն չի վարվել:

3.4 «Վանգաս» ՍՊԸ՝ 3-րդ, «Ավանգարդ» ՍՊԸ՝ 4-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ, «ԳԵՎԳՐՈՒՊ» ՍՊԸ՝ 13-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են ***չհիմնավորված ցածր գնային առաջարկներ և որոշվել է մասնակցից պահանջել համապատասխան հիմնավորում:***

Ընդունվել է որոշում կողմ 6, դեմ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Գ. Տերյան)

4.1 «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1,2,8 և 12 չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՍՊ» ՍՊԸ-ն, 3-րդ չափաբաժնով՝ «Վանգաս» ՍՊԸ-ն, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ և 11-րդ չափաբաժիններով՝ «Ավանգարդ» ՍՊԸ-ն, 5-րդ չափաբաժնով՝ «Պահապան» ՍՊԸ-ն, 10-րդ չափաբաժնով՝ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն, 13-րդ չափաբաժնով՝ «ԳԵՎԳՐՈԻՊ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Գ. Տերյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ. Տերյան)

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 6, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող** | Վ. Գասպարյան |
| **Գնահատող** | Ա. Մարկիսյան |
| **Գնահատող** | Գ. Ռիստյան |
| **Գնահատող** | Ա. Մուրադյան |
| **Գնահատող** | Ս. Աթանեսյան |
| **Գնահատող** | Ա. Հակոբյան |
| **Գնումները համակարգող՝** | Գ. Տերյան |